

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N 347-ԳՅԵԶԲ-21/2-2**

ք. Երևան

« 19 » մարտի 2021թ.

ՀՀ դատախազությունն ի դեմս գլխավոր քարտուղար Յ. Նավասարդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Կարիազամ>>ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Յ. Կարապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Զընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Զննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը

տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում)։

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը։

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը։ Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ։

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը։

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 9900000 (ինը միլիոն ինը հարյուր) ՀՀ դրամ։

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները։

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը։

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը։

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ $VQ = UQ / N \times D \times E$, որտեղ՝

VQ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

UQ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

N-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

D-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

E-ն մատուցված ծառայության քանակն է։

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար։

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով։

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում։

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով։

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ։

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով։

5.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց։

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՏՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634



ԿԱՏԱՐՈՂ

«Կարիազառ» ՍՊԸ
ք. Երևան, Թբիլիսյան խճ. 29/25
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480100076100000
ՀՎՀՀ 01001431
Տնօրեն՝ Հ.Կառապետյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - զստւած ժամտւած պատճառներով:

ՀՀ դրամ

Ծառայության		մատուցման			
Կատարող	Պատվերի նախագիշ	Պատվերի նախագիշի համար	Պատվերի նախագիշի համար	Պատվերի նախագիշի համար	Պատվերի նախագիշի համար
2	50111130/2	Մարդատար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման SU-1, SU-2 ծառայություններ:	Պատվերի նախագիշի համար	Պատվերի նախագիշի համար	Պատվերի նախագիշի համար
		Պատվերի նախագիշի համար	Պատվերի նախագիշի համար	Պատվերի նախագիշի համար	Պատվերի նախագիշի համար

Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք: Պատվիրատուի տրամադրությունը օրվա և ժամի մասին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ դատախազություն
Բ. Երևան, Վ. Սարգսյան 5
ՀՀ Ֆին. նախ. աշխ. գործ. վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՀՀՀ 02506634

(Signature)



ԿԱՏԱՐՈՂ

«Կարիագար» ՍՊԸ
Բ. Երևան, Թբիլիսյան խճ. 29/25
«Սրբազանության» ՓԲԸ
Հ/Հ 2480100076108000
ՀՀՀՀ 01001431
Տնօրեն՝ Կարագարյան



ԿԱՌԱՐԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հազար ՀՀ դրամ

Ծառայության									
Իրավերով նախատեսված սկզբնական ծախսերի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծախսերի ըստ ՉԱՄ դասակարգման (CPV)	Անվանումը	Ֆուկսվագեն մակնիշի տեխնիկական սպասարկում	Տվյալներ մակնիշի ապոմեքենաների	տնայ	Լկմոմ	ոկմոյ	ոկմոյ	Ընդամենը
2	5011130/2				990.0	3465.0	5940.0	9900.0	9900.0

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամսական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ դատախազություն
Բ.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
Հ/ՀՀՀ 02506634

Լեւոն Բաբայան



ԿԱՏԱՐՈՂ

«Կարիագառ» ՍՊԸ
Բ. Երևան, Թբիլիսյան խճ. 29/25
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2480100076100080
Հ/ՀՀՀ 01001431

Տնօրեն՝ Գ.Կարապետյան

Գ.Կարապետյան



Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա), SU-2 (վերանորոգման)

ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, բաղադրիչների և այլ օժանդակ նյութերի

ՀՀ դրամ

Հ/հ	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, բաղադրիչների և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների ծագելու ծագումնաբերություն /տեխնիկական/ ուստ և տեխնիկական 2 չափաբաժին	
		5 տեղանոց մարդատար (լիաքարշակ) Ֆուլկավազեն Պատասխան 2007-2008թթ	5 տեղանոց մարդատար առջևի տանող Ֆուլկավազեն Պատասխան 2007-2008թթ
		7	8
1	2		
	SU-1 ներառող ծառայությունների անվանումը		
1	Բռնկման համակարգի ստուգում	2640	2640
2	ՎՓՏ և աշխատանքի ստուգում	2400	
3	ՓՏ աշխատանքների ստուգում		2400
4	ABS համակարգի ստուգում	2400	2400
5	Ցուրման համակարգի ստուգում	1200	1200
6	Կցորդման համակարգի ստուգում	1200	
7	Շարժիչի ստուգում	2400	3600
8	Կարգանային փոխանցման աշխատանքի ստուգում	2100	
9	Առջևի կախոցների ստուգում	2400	2400
10	Հետևի կախոցների ստուգում	2400	2400
11	Դեկային մեխանիզմի ստուգում	2100	2100
12	Թափի միջակի ստուգում	2100	2100
13	Արգելակման համակարգի ստուգում	1800	1800
14	Ավտոմեքենայի սրահի ստուգում	2400	2400
15	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	2640	2640
16	Մառնցման համակարգի ստուգում	2220	2220
17	Արտաժման համակարգի ստուգում	2400	2400
18	Բաշխիչ տուփի համակարգի ստուգում	6000	
19	Առջևի կամրջակների ստուգում	2100	
20	Հետևի կամրջակների ստուգում	2100	
21	Տարբեր ազդեցականների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1200	1200
22	Ցուրման համակարգի ստուգում	2100	2100
23	Դեկավարման համակարգի ստուգում	2400	2400
24	Օսման համակարգի աշխատանքի ստուգում	2400	2400
	SU-2 ներառող ծառայությունների անվանումը	5 տեղանոց մարդատար (լիաքարշակ) Ֆուլկավազեն Պատասխան 2007-2008թթ	5 տեղանոց մարդատար առջևի տանող Ֆուլկավազեն Պատասխան 2007-2008թթ
1. Շարժիչ			
25	Շարժիչի փոխարինում	54001	45001
26	Շարժիչի բլոկի փոխարինում	42001	36001
27	Շարժիչի բանդում, արտապորտում և հավաքում	84001	72001
28	Շարժիչի գլխիկի միջադիրի փոխարինում	9600	9600
29	Շարժիչի բլոկի հղկում	30001	24000
30	Վառոցի մոմի բնիկի նորոգում	5400	5400
31	Շարժիչի փականի փոխարինում	3000	3000
32	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում 1 հատ	1200	1200
33	Փականների խցուկների փոխարինում 1 հատ	1200	1200
34	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 հատ	6000	4200

35	Ծնկածն լիսեռի հղկում	18000	18000
36	Ծնկածն լիսեռի փոխարինում	54001	48001
37	Ծնկածն լիսեռի ներդիրի փոխարինում	7200	6000
38	Ծնկածն լիսեռի առամասնիվի փոխարինում	36001	30001
39	Ծնկածն լիսեռի ուղղում	36001	36001
40	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	7200	6000
41	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	18000	15000
42	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	26400	26400
43	Մխոցի փոխարինում 1 հատ	18000	12000
44	Բաշխիչ լիսեռի փոխարինում	21000	18000
45	Բաշխիչ լիսեռի ականոցների փոխարինում 1 հատ	1800	1800
46	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում 1 հատ	9000	6000
47	Առամասավոր փոկի փոխարինում	9000	9000
48	Շարժիչի շղթայի փոխարինում	12000	9000
49	Շարժիչի ձգանի փոխարինում	12000	9000
50	Պարկուճ (գիլգա) 1 հատ փոխարինում	12000	9000
51	Շարժիչի յուղի մղիչի շղթայի փոխարինում	15000	12000
52	Շարժիչի վանոսի փոխարինում	12000	9000
53	Շարժիչի կարտերի նորոգում (եռակցում)	4800	4800
54	Շարժիչի կարտերի փոխարինում	9600	8400
55	Շարժիչի կարտերի միջադիրի փոխարինում	8400	7200
56	Շարժիչի կարտերի հանում, տեղադրում՝ մաքրումով	9600	9600
57	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	18000	15000
58	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	18000	15000
59	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	3000	3000
60	Շարժիչի յուղի մղիչի միջադիրի փոխարինում	9000	9000
61	Շարժիչի յուղի մղիչի թաթիկի փոխարինում	9000	9000
62	Շարժիչի յուղի ծորակի փոխարինում	6000	6000
63	Օդաքաշակ փողոսակի փոխարինում	7200	7200
64	Շարժիչի կոմպրեսորի փոխարինում (տուրբոմղիչ)		
65	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում		
66	Շարժիչի բարձիկի փոխարինում	9000	9000
67	Բաշխիչ լիսեռի կախարիչի փոխարինում	12000	12000
68	Թափանիվի փոխարինում	27000	24000
69	Թափանիվի փսակի փոխարինում	21000	18000
70	Շարժիչի կախույրի փոխարինում	12000	9000
71	Շարժիչի կախույրի միջադիրի փոխարինում	12000	10200
72	Շարժիչի կալունի փոխարինում	9000	7200
73	Մխոցային մատի փոխարինում	9000	6000
74	Շարժիչի շարժաթևի փոխարինում	39001	36001
75	Մխոցային օղակի փոխարինում	3000	3000
76	Բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	12000	9000
77	Առամասնիվի փոխարինում	6000	6000
78	Փականի սուխարիկի փոխարինում	9000	9000
79	Հագոցի հարվածամեղմիչի փոխարինում	3000	3000
80	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	9000	7200
81	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	7200	6000
82	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	7200	6000
83	Շարժիչի յուղի արանքաչափիչի (շուկ) փոխարինում	600	600
84	Շարժիչի յուղի մխոցաքաշակի (շուկ) լիթասի փոխարինում	2400	2400
85	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	6000	4800
86	Շարժիչի զամասեղի փոխարինում	4500	4500
87	Շարժիչի զամասեղի բնիկի նորոգում	3600	3600

88	Շարժիչի Փլիսիկի հեղույսի փոխարինում /բոլտ/	2400	2400
89	Ենկաձև լիսեռի հեղույսի փոխարինում /բոլտ/	4200	4200
90	Շարժիչի համակարգչի վերանորոգում	30001	30001
91	Շարժիչի համակարգչի փոխարինում	6000	6000
92	Հենակային տափօղակի փոխարինում	1200	1200
93	Ցուղի տարայի փականի փոխարինում	600	600
94	Շարժիչի վերնի կախարիչի փոխարինում	600	600
95	Շարժիչի փակի պաշտպանիչի փոխարինում	9000	9000
2.Դեկավարման, սնման և շուղման համակարգ			
96	Շարժիչի շուղի փոխարինում	1 800	1 800
97	Շարժիչի շուղի զտիչի փոխարինում	1 200	1 200
98	Հովացման հեղուկ (antifriz) փոխարինում	3 000	3 000
99	Համակարգչային ախտորոշում՝ թերութշունների վերացմամբ	3 600	3 600
100	Ցուղի ռադիատորի փոխարինում	7 200	6 000
101	Ցուղի ռադիատորի նորոգում	9 000	9 000
102	Ցուղի պոմպի փոխարինում	13 200	12 000
103	Ցուղի զտիչի փականի փոխարինում	4 800	4 800
104	Արտածման կոլեկտորի փոխարինում	10 200	9 000
105	Ներածման կոլեկտորի փոխարինում	10 200	9 000
106	Արտածման կոլեկտորի միջադիրի փոխարինում	9 000	7 200
107	Ներածման կոլեկտորի միջադիրի փոխարինում	9 000	7 200
108	Վառելիքի փողրակի փոխարինում	4 800	4 800
109	Խառնարակի փոխարինում		
110	Ցուղի փողրակի փոխարինում	4 500	4 500
111	Վառոցքի մոմի խառարի փոխարինում	5 400	5 400
112	Մարման ընթացքի կարգավորիչի փոխարինում	4 800	4 800
113	Վառոցքի մոմի փոխարինում	2 400	1 800
114	Վառելանշուքի զտիչի փոխարինում	6 600	6 600
115	Սրահի օդի զտիչի փոխարինում	1 500	1 500
116	Պատյանի օդի զտիչի փոխարինում	1 200	1 200
117	Օդի զտիչի փոխարինում	1 050	1 080
118	Օդի ծախսաչափիչի փոխարինում	5 400	5 400
119	Օդի ծախսաչափիչի փողրակի փոխարինում	3 000	3 000
120	Օդի զտիչի փողրակի փոխարինում	3 000	3 000
121	Օդաբաշի փողրակի փոխարինում	3 000	3 000
122	Ավտոմատ փոխանցման տուփի դեկավարման բլոկի փոխարինում	24 000	
123	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում 1 հատ	1 200	1 200
124	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	12 000	12 000
125	Բոցամուղի կողավորում	7 500	7 500
126	Ինժեկտորի բոցամուղի խցուկների փոխարինում	9 000	9 000
127	Բենզամղիչի փոխարինում	6 600	6 000
128	Վառելանշուքի խողովակի փոխարինում	3 600	3 600
129	Բոնկման կարգավորում	3 000	3 000
130	CO կարգավորում	2 700	2 700
131	Դեկավարման բլոկի փոխարինում	9 000	9 000
132	Դեկավարման բլոկի վերանորոգում	36 001	30 001
133	Վառելիքի բաքի փոխարինում	12 000	12 000
134	Վառելիքի բաքի մաքրում	6 000	6 000
135	Արագարարի ոտնակի փոխարինում	3 600	3 600
136	Արագարարի ճռպանի փոխարինում	3 000	3 000
137	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում	3 600	3 600
138	Օդի ծախսի տվիչի փոխարինում	3 000	3 000
139	Ցրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	3 000	3 000
140	Ցրի խողովակի, փողրակի փոխարինում	3 000	3 000

141	Բենզոքսաբի բենզոմիդիլի ցանցի փոխարինում	4 800	4 800
142	Բենզոքսաբի բենզոմիդիլի ցանցի մաքրում	3 900	3 900
143	Ցուղի ճնշման տվիչի փոխարինում	4 200	4 200
144	Տվիչի փոխարինում	1 800	1 800
3. Սառեցման և արտաժաման համակարգ			
145	Հովհարի փոխարինում	7 200	7 200
146	Հովհարի փոկի փոխարինում	6 000	6 000
147	Հովհարի պատշանի փոխարինում	6 000	6 000
148	Ոաղիատորի փոխարինում	9 000	9 000
149	Ոաղիատորի շրջանակի փոխարինում	6 000	6 000
150	Շերտափեղկի փոխարինում	6 000	6 000
151	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	6 000	6 000
152	Ոաղիատորի կալունակի փոխարինում	4 500	4 500
153	Ոաղիատորի փողրակի փոխարինում	7 800	7 200
154	Կոնդիցիոների կոմպրեսորի փոխարինում	10 800	10 800
155	Կոնդիցիոների կալունակի փոխարինում	7 200	7 200
156	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	6 000	6 000
157	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	9 000	9 000
158	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	18 000	18 000
159	Կոնդիցիոների փոկի փոխարինում	4 200	4 200
160	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	15 000	15 000
161	Ընդարձակող բաքի փոխարինում	2 400	2 400
162	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1 800	1 800
163	Ընդարձակող բաքի փակակի փոխարինում	600	600
164	Ջրի ծորակի փոխարինում	3 000	3 000
165	Ջրի պոմպի խցուկի փոխարինում	3 000	3 000
166	Ջրի պոմպի առանցքակալի փոխարինում	3 000	3 000
167	Ջրի պոմպի թևակի փոխարինում	4 200	4 200
168	Սառնարանի փոխարինում	6 000	6 000
169	Կրոշտեյնի փոխարինում	1 200	1 200
170	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	4 800	4 800
171	Արագագործ կցորդ	1 200	1 200
172	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	2 400	2 400
173	Հովհարի շարժիչի փոխարինում	5 400	5 400
174	Հովհարի թևակի փոխարինում	3 000	3 000
175	Վառարանի ռադիատորի փոխարինում՝ բոլոր աշխատանքները ընդգրկված	27 000	27 000
176	Վառարանի շարժիչի փոխարինում	15 000	15 000
177	Թերմոստատի փոխարինում	9 000	7 200
178	Թերմոստատի պատշանի փոխարինում	4 800	4 800
179	Ջրի պոմպի փոխարինում միջադիրով	10 800	9 000
180	Գեներատորի փոկի փոխարինում	3 600	3 600
181	Գեներատորի փոկի ձգող հուլովակի փոխարինում	3 600	3 600
182	Ջրի ռադիատորի վերանորոգում	12 000	12 000
183	Թերմոստատի միջադիրի փոխարինում	3 000	3 000
184	Սառեցման համակարգի օդափնում	2 400	2 400
185	Նլարարի գոֆրաշի փոխարինում	4 800	4 800
186	Նլարարի կառավիգատորի տվիչի փոխարինում տվիչ	4 200	4 200
187	Կառավիգատորի հանում կամ փոխարինում	12 000	12 000
188	Նլարարի 1 հատ խողովակի փոխարինում	4 200	4 200
189	Նլարարի անուրի (խումուր) փոխարինում	1 200	1 200
190	Նլարարի ներդիրի փոխարինում	3 000	3 000
191	Նլարարի փոխարինում	5 100	5 100
192	Նլարարի կախոցի փոխարինում	1 500	1 500
193	Կալունակի փոխարինում	1 800	1 800

194	Ուեզոնատորի փոխարինում	4 800	4 800
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ			
195	Աշխատանքային կամ գլխ. Գլանի փոխարինում (կոնուսի բաշոկ)		6000
196	Աշխատանքային կամ գլխ. Գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները		6000
197	Կցորդման սկավառակների փոխարինում		24000
198	Կցորդման ռոտակի փոխարինում		6000
199	Կցորդման ռոտակի տվիչի փոխարինում		6000
200	Կցորդման ճապակի փոխարինում		6000
201	ՓՏ կախարիչի փոխարինում		7200
202	ԱՓՏ-ի կախարիչի փոխարինում	9000	
203	Կցորդման փողակի փոխարինում	4200	4200
204	Կցորդման երկծանիի փոխարինում	6000	6000
205	ՓՏ-ի հավաքածուի (remkomplekt) փոխարինում		42001
206	ՓՏ-ի փոխարինում		36001
207	ՓՏ-ի առջևի խցուկների փոխարինում	12000	12000
208	ՓՏ-ի հետևի խցուկների փոխարինում	12000	12000
209	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում		6000
210	ԱՓՏ-ի փոխարինում	30001	
211	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում		36001
212	ՓՏ-ի պատյանի փոխարինում		30001
213	ԱՓՏ-ի պատյանի փոխարինում	36001	
214	ՓՏ-ի փոխանցման փոշեթիկնոցի փոխարինում	3000	3000
215	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	7200	7200
216	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում		19500
217	ՓՏ-ի առամասնիվի փոխարինում		19500
218	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում		20100
219	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում		20100
220	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում		18000
221	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում		19500
222	ՓՏ-ի քարձիկի փոխարինում		8100
223	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում		8100
224	ՓՏ-ի յուղի փոխարինում		3300
225	ՓՏ-ի ուղղորդիչի վռանի փոխարինում		7500
226	ՓՏ-ի մուֆտի փոխարինում		21000
227	Վազբաշափիչի շարժաբերի փոխարինում	6000	6000
228	ԱՓՏ-ի վերանորոգման հավաքածու (remkomplekt) փոխարինում	48001	
229	ԱՓՏ-ի առամասնիվի փոխարինում	24000	
230	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	42001	
231	ԱՓՏ-ի մուֆտի փոխարինում	36001	
232	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	36001	
233	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կալունակի փոխարինում	12000	
234	ԱՓՏ-ի սոլենոիդների փոխարինում	36001	
235	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	36001	
236	ԱՓՏ-ի յուղի մղիչի խցուկների փոխարինում	6000	
237	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	4800	
238	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	9000	
239	ԱՓՏ-ի հիդրոհանգույցի փոխարինում	12000	
240	ԱՓՏ-ի յուղի գալիչի փոխարինում	9000	
241	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	9000	
242	ԱՓՏ-ի քարձիկի փոխարինում	12000	
243	ԱՓՏ-ի գալիչի լվացում, մաքրում՝ կարտերի հանում և տեղադրումով	12000	

244	Վարիատոր փտ-ի փոկի փոխարինում	
245	Վարիատոր փտ-ի տանող լիսեռի փոխարինում	
246	Վարիատոր փտ-ի միջին լիսեռի փոխարինում	
247	Վարիատոր փտ-ի բարձր ճնշման մղիչ փոխարինում	
248	Վարիատոր փտ-ի յուղի փոխարինում	
249	Վարիատոր փտ-ի յուղի գտիչի փոխարինում	
250	Վարիատոր փտ-ի առանցքակալի փոխարինում	
251	Վարիատոր փտ-ի խցուկի փոխարինում	
252	Վարիատոր փոխանցման տուփի փոխարինում	

5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ

253	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում՝ ներառյալ բոլոր աշխատանքները	60 001
254	Բաշխիչ տուփի փոխարինում	18 000
255	Բաշխիչ տուփի թանդում և արատավորում, հավաքում	30 001
256	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	12 000
257	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	12 000
258	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում 1 հատ	6 000
259	Բաշխիչ տուփի շարժաքերի փոխարինում	12 000
260	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	12 000
261	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	18 000
262	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	18 000
263	Բաշխիչ տուփի երկրորդի փոխարինում	12 000
264	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	12 000
265	Բաշխիչ տուփի խցուկ փոխարինում	12 000
266	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	12 000
267	Կարդանային լիսեռի փոխարինում	18 000
268	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	6 000
269	Բաշխիչ տուփի կալուսակի փոխարինում	24 000
270	Տվիչի փոխարինում	3 600
271	Բաշխիչ լիսեռի ասամսակի փոխարինում	10 800
272	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	10 500
273	Բաշխիչ տուփի շղթայի փոխարինում	9 000

6. Առջևի և հետևի կամրջակներ

274	Առջևի կամրջակի փոխարինում	
275	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) թանդում, արատավորում և հավաքում	
276	Առջևի կամրջակի կիսասոնու փոխարինում	
277	Առջևի կամրջակի կիսասոնու առանցքակալի փոխարինում	
278	Առջևի կամրջակի կիսասոնու առանցքակալի խցուկների փոխարինում	
279	Կամրջակի յուղի փոխարինում	
280	Առջևի կամրջակի բռուկների գնդածև հենարանի փոխարինում	
281	Առջևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	
282	Առջևի կամրջակի տվիչի փոխարինում	
283	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	
284	Կիսասոնու միջադիրի փոխարինում	
285	Կարգավորիչի տափօղակի փոխարինում	
286	Դիֆերենցիալի առանցքակալի փոխարինում	
287	Դիֆերենցիալ սատելիտի փոխարինում	

288	Գիճճերենցիայ գնդի փոխարինում			
289	Սատելիտների պատշաճի փոխարինում			
290	Տանող առամանիվի խցուկի փոխարինում			
291	Տանող առամանիվի առանցքակալի փոխարինում			
292	Ուեզոնատորի փոխարինում			
293	Գետնի կամրջակի փոխարինում			
294	Գետնի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում			
295	Գետնի կամրջակի կիսասոսնու փոխարինում			
296	Գետնի կամրջակի կիսասոսնու առանցքակալի փոխարինում			
297	Գետնի կամրջակի կիսասոսնու առանցքակալի խցուկի փոխարինում			
298	ռեդուկտորի փոխարինում	24 000		24 000
299	Գետնի կամրջակի բոունցքի գնդածն հենարանի փոխարինում			
300	Գետնի կամրջակի Գիճճերենցիայի փոխարինում			
301	Գետնի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում			
302	Կամրջակի տվիչի փոխարինում			
303	Կամրջակի իրանի փոխարինում (չուլոկ)			
304	Կամրջակի յուղի փոխարինում			
7. Կախոց				
305	Տրավերսի փոխարինում	18 000		18 000
306	Տրավերսի բարձիկի փոխարինում	10 800		10 800
307	Չախ կամ աջ հողակապի փոխարինում	7 200		7 200
308	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոցի փոխարինում	5 400		5 400
309	Առջևի անվակուևոցի առանցքակալի փոխարինում	5 400		5 400
310	Առջևի անվակուևոցի փոխարինում	5 400		5 400
311	Գետնի անվակուևոցի փոխարինում	5 400		5 400
312	Գետնի անվակուևոցի առանցքակալի փոխարինում	5 400		5 400
313	Անվակուևոցի զամասեղի և Գեղույսի փոխարինում (մեկ անիվի համար)	2 400		2 400
314	Չախ կամ աջ հողակապի խցուկ փոխարինում	3 000		3 000
315	Ցնցամեղմիչի բասակի փոխարինում	4 800		4 800
316	Առջևի ցնցամեղմիչի փոշեթիկնոցի փոխարինում	3 600		3 600
317	Գետնի ցնցամեղմիչի փոշեթիկնոցի փոխարինում	3 600		3 600
318	Առջևի զսպանակի փոխարինում	5 400		4 800
319	Առջևի ցնցամեղմիչի փոխարինում	5 400		5 400
320	Պնևմոցնցամեղմիչի փոխարինում			
321	Պնևմոցնցամեղմիչի բարձիկների փոխարինում			
322	Ցնցամեղմիչի վռանների փոխարինում	3 000		3 000
323	Ներքևի լծակի փոխարինում	6 000		5 400
324	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	3 600		3 600
325	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	1 800		1 800
326	Ցնցամեղմիչի բարձիկի փոխարինում	5 400		5 400
327	Անիվների պաշտպանիչի փոխարինում	2 400		2 400
328	Վերնի լծակի փոխարինում	4 800		4 200
329	Վերնի լծակի վռանների փոխարինում՝ 1 հատ	3 600		3 000
330	Վերնի լծակի հեղույսի փոխարինում	1 200		1 200
331	Գետնի վերնի լծակի վռանի փոխարինում՝ 1 հատ	4 200		3 000
332	Գնդե հողակապի պատշաճի փոխարինում	3 000		3 000
333	Գնդե հողակապի փոխարինում	4 800		4 200
334	Գնդե հողակապի նորոգում	6 000		6 000
